ալիքներով, որոնց վրա խտացող գիշերը վառում էր իր անթիւ անհամար մանրիկ ճրագները:



ՖՈՒՋԻ ԵԱՄԱ ԵՒ ԼԻՃ ՀԱԿՈՆ

Աչքերս յառած՝ նայում էի մութին, ուիմ երեւակայութեանս մէջ «ծագող արեւի» կղզիներն էին դեռ միշտ եւ նրանց բնակիչների փոքրիկ շնորհալի կերպարանքները, որոնք ինձ իրանց գրաւիչ ժպիտն էին ուղարկում եւ մի առանձին համբոյրի տակ էին պահում հոգիս: Եւ ինչքան խորասուզւում էի իմ յիշողութիւններիս մէջ, այնքան աւելի առեղծւածային ու անբացատրելի էր թւում ինձ այդ ժողովրդի հոգին: Ի՞նչ համբոյրով նա հասել է իր այդ զարմանալի հոգեկան պարզութեանն ու